

Հաստատում եմ
ԵԿՏԱ-ի ռեկտոր Ավետիսյան

ստորագրելով

« 25 »

08

00436007

2008թ.



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման
համակարգի կիրառման մեթոդական ցուցումներ

Երևան 2008

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵՂԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԷՈՒԹՅԱԻՆԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ԴԱՇՏԸ

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է Բոլոնիայի գործընթացին համահունչ՝ միասնական կրթական դաշտին ինտեգրվելու ուղին: Բոլոնիայի հռչակագրի դրույթներով նախատեսված է մինչև 2010 թվականը ստեղծել բարձրագույն կրթության համաեվրոպական միասնական տարածք, որի հենասյուններից մեկն է լինելու կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը՝ որպես բուհերում ուսուցման կազմակերպման հիմնական մոտեցում: Ուստի ՀՀ-ում կրթական բարեփոխումների ընթացքը պահանջում է ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կիրառում:

Կրեդիտային համակարգը եվրոպայում լայն կիրառություն է ստացել հատկապես վերջին տասնամյակում՝ Կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի (ECTS) ստեղծման արդյունքում:

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը ներդրվել է 1989թ: ECTS-ը համաեվրոպական միասնական համակարգ է, որը նախատեսում է բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ուսանողների ուսումնառության արդյունքների միասնական արժևորում, պաշտոնական ճանաչում և բուհից բուհ փոխանցում: Այն հիմնարար դեր ունի ազգային և համաեվրոպական որակավորումների հենքերի ստեղծման գործում, դյուրացնում է կրթական ծրագրերի ընթեռնումը և դրանց համեմատումը, ծառայում է ուսանողներին՝ բուհերի ներսում կրեդիտների կուտակման և բուհերի միջև դրանց փոխանցման գործառույթներով, ուսանողակենտրոն համակարգ է՝ հիմնված կրթական ծրագրի նպատակներին հասնելու համար ուսանողից պահանջվող լրիվ բեռնվածքի վրա: Անցումը կոշտ ուսումնական պլաններով և ակադեմիական խմբերով բնութագրվող առկա համակարգից կրեդիտայինին ենթադրում է բազմաթիվ կազմակերպական, ծրագրային, տեղեկատվական և ֆինանսական խնդիրների համատեղ լուծում:

Կրեդիտային համակարգի ներդրումը պայմանականորեն ներառում է 3 բաղադրիչ.

- ուսումնական գործընթացի վերափոխում,
- վարչական կառավարման փոփոխություններ,
- ֆինանսական կառավարման նոր սխեմաների մշակում և ներդրում

Դրանցից կարևորագույնը ուսումնական գործընթացի վերափոխումն է: Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի ներդրումով վերափոխվում և մոդուլացվում են գործող կոշտ ուսումնական պլանները՝ արտահայտելով դրանք կրեդիտային արժեքներով և դարձնելով ուսումնական ծրագրերը միջազգայնորեն ճանաչելի:

Կրթական ծրագրի բոլոր դասընթացների և ուսումնական մոդուլների համար սահմանվում են կրեդիտային արժեքներ, որոնք արտահայտում են ուսանողին ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ ծանրաբեռնվածությունը: Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը համապատասխան դասընթացը կամ ուսումնական մոդուլը հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:

Մինչև վերջերս բուհերում գնահատվում էր առավելապես պրոֆեսորադասախոսական համակազմի ծանրաբեռնվածությունը, սակայն, ուսանողի ծանրաբեռնվածությունը նույնպես պետք է ենթարկվի որոշակի նորմատիվների, և կրեդիտային համակարգի հենքում դրված է ուսանողի, այլ ոչ թե դասախոսի ծանրաբեռնվածությունը:

Բուհական կրթական ծրագրերում ընդգրկված լինելու և բավարար առաջընթաց արձանագրելու համար ուսանողը յուրաքանչյուր կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական ծանրաբեռնվածություն (ներառյալ արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը):

Ուսուցման արդյունքների հաշվարկման կրեդիտային համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գնահատման դաշտում, լսարանայինի հետ մեկտեղ, ընդգրկված է նաև ուսանողների արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը: Հետևաբար, գնահատման նույն հարթությունում են գտնվում ինչպես լսարանային հաճախումների ընթացքում ուսանողների թեստային և այլ գրավոր աշխատանքները, դասախոսի հետ անհատական աշխատանքը, այնպես էլ արտալսարանային աշխատանքի արդյունքները:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 19-ի N 588 -Ա/Ք հրամանով հաստատվել է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգը, որտեղ ներկայացված են համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի այն հիմնական սահմանումներն ու դրույթները¹, որոնք կիրառվում են ՀՀ բարձրագույն կրթության համակարգում:

1. **Կարողությունը** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դիմամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ՝ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):
2. **Կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական

¹ Սահմանումները մեջբերված են «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգից:

արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

3. Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

4. ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

- կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,

- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատականը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,

- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

6. **Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:
7. **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար:
8. **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.**
- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
 - կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
 - կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները պետք է նախապես հրապարակվեն (տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքում),
 - հավատարմագրված բուհերում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց կրթական արդյունքները համարժեք են,
 - եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ECTS-ի պահանջներին համապատասխանող եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

1. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Բարձրագույն կրթության միասնական տարածքի ձևավորումը վերջին տասնամյակում հիմնախնդիր դարձավ առաջին հերթին Եվրամության երկրների համար: Մի կողմից՝

ունենալով տնտեսական միասնական համակարգ և աշխատանքի շուկա, եվրոպական երկրներում անհրաժեշտություն դարձավ փոխվստահության սկզբունքներով կրթության կազմակերպումն ու դիպլոմների տրամադրումը, մյուս կողմից՝ կրթության եվրոպական համակարգին առաջադրվեցին որոշակի պահանջներ՝ համաշխարհային գրավչության ապահովում և մրցակցային դիրքերի ուժեղացում: Եվրամիության կրթության նախարարների համատեղ հռչակագիրը, որը ստորագրվեց Բոլոնիայում 1999թ. հուլիսի 19-ին, նպատակ ունի ստեղծելու «Գիտելիքների Եվրոպա» համակարգը: Հռչակագիրը նախանշում էր հիմնադրել կրեդիտային համակարգ՝ ինչպիսին է ECTS-ը՝ որպես ուսանողների մեծամասշտաբ շարժունակությունը խթանող միջոց: Արձանագրվեց, որ կրեդիտներ կարելի է ձեռք բերել նաև բարձրագույն ուսումնական հաստատություններից դուրս, եթե այդ կրեդիտները ճանաչված են ընդունող շահագրգիռ համալսարանների կողմից:

Անկախացումից հետո ՀՀ սոցիալական քաղաքականության ուղենիշներից է նաև կրթության կազմակերպումը միջազգային չափանիշներին համապատասխան: Կրթության մասին ՀՀ օրենքի (1999թ.) հոդված 5-ի 4-րդ կետով, որպես կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունք, նշվեց միջազգային կրթական համակարգին ինտեգրումը: ՀՀ կառավարության կողմից 2003թ. հաստատված «Բարձրագույն կրթության ռազմավարությունում» գերակայությունների շարքում է գտնվում կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը:

Այնուհետև, 2005թ. մայիսին Նորվեգիայի Բերգեն քաղաքում Հայաստանի Հանրապետությունը ստորագրեց Բոլոնիայի գործընթացին միանալու համաձայնագիր՝ այդպիսով ընդգրկվելով բարձրագույն կրթության եվրոպական տարածքում:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (2005թ.) հոդված 3-ի 18-րդ կետով կրեդիտների կուտակման փոխանցման եվրոպական համակարգը (ECTS) ներկայացվում է որպես համաեվրոպական կրեդիտային համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների շարժունակությունը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում: Ընդ որում, օրենքի հոդված 26-ի 5-րդ կետում նշվում է, որ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը սկսվում է 2006/2007 ուսումնական տարվանից:

Ելնելով օրենքի պահանջից՝ 2005թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ Կառավարությունը որոշում ընդունեց «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» (թիվ 2307): Ըստ որոշման 1-ին կետի՝ 2006/2007 ուսումնական տարվանից ՀՀ բուհերում պետք է սկսել ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը: Որոշման 2-րդ կետով պահանջվում է սահմանել ուսանողի տարեկան լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ հավասար 60 ակադեմիական կրեդիտի:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը սկսվելու է 2007/2008 ուստարվանից, կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների՝ ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով: ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ամբողջական (փոխանցման և կուտակման) կիրառումը պարտադիր է սկսած 2010/2011 ուստարվանից:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԵՆՔՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ

ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 լրիվ կամ 36 ակադեմիական ժամի² (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական ծանրաբեռնվածությանը: ԵԿՏՍ-ում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ բուհերում, ուսումնական և տարեկան օպերատիվ պլանները, առարկայական ծրագրերի իրականացման հաշվարկը, դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունը և ուսումնական գործընթացի ֆինանսավորման համակարգը հիմնված են ակադեմիական ժամերի վրա: Ըստ այդմ՝ ԵԿՏՍ-ում կրեդիտների համարժեքությունը չափվում է ակադեմիական ժամերով:

Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակում՝ աշնանային և գարնանային: Ուսումնական պարապմունքները իրականացվում են 20-ական շաբաթ՝ յուրաքանչյուր կիսամյակում: ԵԿՏՍ-ում ուսումնական տարին ամբողջությամբ տրամադրվում է ուսումնական պարապմունքներին:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածությունը առավելագույն 54 ակադեմիական ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային ծանրաբեռնվածությունը, ըստ ԿԳ նախարարության հաստատած կարգի, կարող է կազմել 23-30 ժամ³, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ: ԵԿՏՍ-ում դրանք կազմում են համապատասխանաբար 28 և 18 ժամ:

Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ, իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ ուսումնական ծանրաբեռնվածություն:

² Օրինակելի կարգում կրեդիտի բովանդակությունը ներկայացվում է միայն լրիվ աստղաբաշխական ժամերով, ԵԿՏՍ-ում միացյալ (առանց դասամիջոցի) զույգ ակադեմիական ժամը հավասարվում է 80 րոպեի:

³ Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների

Բակալավրի աստիճան ստանալու համար սահմանվում է վաստակել առնվազն 240 կրեդիտ: Համաձայն ՀՀ Կառավարության 2005թ. թիվ 2307 որոշման 2-րդ կետի՝ ուսանողի ծանրաբեռնվածությունն ընդգրկում է.

- մասնակցությունը դասախոսություններին, գործնական և լաբորատոր պարապմունքներին, պրակտիկաներին,
- քննությունների և ստուգարքների հանձնումը,
- անհատական պարապմունքները,
- ռեֆերատները, կուրսային, դիպլոմային և ուսումնական պլանով նախատեսված այլ աշխատանքներ:

Կրեդիտային հենքով ուսումնական պլաններում հաշվի են առնվում ուսանողի ծանրաբեռնվածության վերը ներկայացված տարրերը: Մասնավորապես առանձին սյունով ներկայացվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը, որը չէր արտացոլվում ավանդական ուսումնական պլաններին **(տես հավելված 11):**

Կրեդիտային համակարգով ուսուցումը ենթադրում է դասավանդվող առարկաների մոդուլավորում: Ուսումնական պլաններում ներկայացվում են միայն այն մոդուլները, որոնցից յուրաքանչյուրը մեկ կիսամյակ տևողություն ունի: Մեկ կիսամյակ դասավանդվող առարկան ներկայացվում է մեկ մոդուլով, երկու կիսամյակ դասավանդվող՝ երկու մոդուլով, երեք կիսամյակ դասավանդվող՝ երեք մոդուլով:

Յուրաքանչյուր մոդուլի դասավանդումն իր հերթին պահանջում է ուսանողի առանձնահատուկ ծանրաբեռնվածություն, որը ձևավորվում է մասնագիտական կրթությանը հատուկ չափանիշներով: ԵԿՏԱ-ում ուսանողի ծանրաբեռնվածության կառուցվածքի չափանիշների սահմանման հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները՝

- յուրաքանչյուր մոդուլին հատկացվում է 2-ից մինչև 5 կրեդիտ,
- որքան մոտ է դասավանդվող մոդուլը մասնագիտությանը, այնքան բարձր է ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածությունը, հետևաբար շատ են դրանց ամրագրված կրեդիտները:

Դասավանդվող մոդուլներին կրեդիտներ ամրագրվել են կրթական չափորոշիչներով նախատեսված կրթաբլոկների տարբերակմամբ:

Կրթաբլոկներ	Յուրաքանչյուր մոդուլին ամրագրվող կրեդիտը
Հումանիտար և սոցիալական	2,3
Մաթեմատիկական և բնագիտական	3,4,5
Ընդհանուր մասնագիտական	3,4,5

Մասնագիտացման	4,5
---------------	-----

Կախված նրանից, թե ընտրովի դասընթացը որ կրթաբլոկին է պատկանում, այն կարող է ունենալ 2,3,4 կամ 5 կրեդիտ:

Հաստատվել է համապատասխան մոդուլների և լսարանային ժամերի հետևյալ հարաբերակցությունը, որը հիմք է ծառայել կրեդիտային հենքով ուսումնական պլանների կառուցման համար:

	Հումանիտար և սոցիալական	Բնագիտական և մաթեմատիկական	Ընդհանուր մասնագիտական	Մասնագիտացման	Հաստատվել է հումանիտար և սոցի
Դասընթացներին հատկացվող կրեդիտները ըստ կրթաբլոկների	2,3 կրեդիտ	3,4,5 կրեդիտ	3, 4,5 կրեդիտ	4,5 կրեդիտ	
Կիսամյակային նվազագույն լսարանային ժամեր	30 ժամ	50 ժամ	60 ժամ	60 ժամ	

ալական, մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական առարկաների ցանկը և դրանց հատկացվող ուսումնական ժամաքանակը: Համաձայն կրեդիտային հենքով ուսումնական պլանի նոր մոդելի՝ մեծացվում է մասնագիտական և մասնագիտացման դասընթացների տեսակարար կշիռը:

Բակալավրի աստիճան ստանալու համար սահմանված 240 կրեդիտից՝

- հումանիտար և սոցիալական դասընթացների գումարային կրեդիտը հավասար է 36-60-ի (18-30 մոդուլ, յուրաքանչյուրը՝ 2-ական կրեդիտ),
- մաթեմատիկական և բնագիտական դասընթացների գումարային կրեդիտը հավասար է 18-30-ի (6-10 մոդուլ, յուրաքանչյուրը 3-ական կրեդիտ),
- ընդհանուր մասնագիտական դասընթացների գումարային կրեդիտը հավասար է 68-100-ի (17-25 մոդուլ, յուրաքանչյուրը՝ 4-ական կրեդիտ),

Համաձայն վերը նշվածի՝ հումանիտար և սոցիալական դասընթացների և մաթեմատիկական և բնագիտական դասընթացների գումարային կրեդիտը կազմում է 54-90: Առաջարկվել է բակալավրիատի 8-րդ ավարտական կիսամյակի հետևյալ մոդելը.

Հերթակա նությունը	Գործունեությունը	Տևողությունը	Նշումներ
	7-կիսամյակի քննաշրջան		
	արձակուրդ		
	քննաշրջան		
	արտադրական պրակտիկա		
	պետական քննությանը նախապատրաստվելու ժամանակաշրջան		
	պետական քննությունների կազմակերպում		
	դիպլոմային աշխատանքի նախա- պատրաստում և պաշտպանություն		

Բովանդակություն	Կրեդիտներ
արտադրական պրակտիկա՝ 4 շաբաթ	
պետական քննություն	
ավարտական թեզ	
ԸՆԴԱՄԵՆԸ	

Ուսանողի, հետագայում նաև դասախոսի ծանրաբեռնվածության կառուցվածքը և ծավալը սահմանելիս, չափազանց կարևոր է յուրաքանչյուր մոդուլին վերաբերող՝ լսարանային, անհատական և ինքնուրույն աշխատանքների ժամերի չափաբաժինների որոշումը: ԵԿՏԱ-ում դա կատարվում է համաձայն ընդունված նորմատիվների և որոշակի կանոնների.

5. Լսարանային ժամերի քանակը հավասար է տվյալ մոդուլի շաբաթական ժամերի քանակ⁴:
6. Ուսանողի անհատական աշխատանքի ժամերը ներառում են դասախոսի խորհրդատվությամբ արտալսարանային աշխատանքը (օրինակ՝ անհատական առաջադրանքին առնչվող դասախոսի խորհրդատվությունները): Հաստատված են հետևյալ նորմատիվները.

⁴ ԵԿՏԱ-ում կիսամյակի 16 շաբաթները տրամադրվում են միայն ուսումնական գործընթացին, այսինքն՝ քննաշրջանն առանձնացվում է:

- տարբերակված գնահատականներով գնահատվող (քննությանը ավարտվող) մոդուլների համար՝ լսարանային ժամերի 20 տոկոսը,
 - ստուգարքով ավարտվող մոդուլների համար՝ լսարանային ժամերի 10 տոկոսը,
3. Ուսանողի ինքնուրույն աշխատանքը ներառում է առանց դասախոսի խորհրդատվության արտալսարանային աշխատանքը, օրինակ՝ սեմինարներին, գործնական պարապմունքներին, ստուգարքներին, քննություններին պատրաստվելը:

Լսարանային, անհատական և ինքնուրույն ժամերը գտնվում են հետևյալ կապի մեջ՝

ուսանողի ընդհանուր ժամային ծանրաբեռնվածություն տվյալ մոդուլի համար = մոդուլի կրեդիտ X 36 ակադեմիական ժամ = լսարանային ժամեր + անհատական արտալսարանային առաջադրանքի ժամեր + ինքնուրույն աշխատանքի ժամեր:

3.ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԵԿՏԱ-ում 2008/2009 ուսումնական տարվանից կրեդիտային համակարգի ներդրումը պահանջել է ծրագրային և կազմակերպական զգալի վերափոխումներ: Համաձայն հաստատված ծրագրի՝ նախատեսվել են փուլային գործընթացներ, որոնցից մեկն էլ 2008/2009 ուսումնական տարվանից կամավոր ընտրովի կրթական մոդուլների (դասընթացների) ներդրումն է:

Կամավոր ընտրովի դասընթացների համակարգի ներդրման համար անհրաժեշտ են նախապայմաններ, որոնք ԵԿՏԱ-ում արդեն իսկ առկա են.

- կրթական մոդուլներ և դրանց չափելիությունը կրեդիտներով,
- կիրառվող ուսումնական ծրագրերի ձևաչափ, որը հնարավորություն է ընձեռում ընտրովի դասընթացներ կիրառելու:

ԵԿՏԱ-ում ընտրովի դասընթացների համակարգը արմատավորվում է հետևյալ փուլերով.

- կրթական մոդուլների ընտրություն մասնագիտական թողարկող ամբիոնի կողմից (այս փուլի հիմնական նպատակներից է նաև համապատասխան դաշտի ստեղծումը և ուսանողների շրջանում նոր մտածելակերպի ձևավորումը),
- կրթական մոդուլների միջամբիոնային ընտրություն (այս փուլում կձևավորվեն միևնույն մասնագիտության ուսանողների էականորեն տարբերակված՝ անհատական ուսումնառության ծրագրեր),
- կրթական մոդուլների միջհամալսարանական ընտրություն (այս փուլը կհամընկնի կրեդիտային համակարգի ներդրման ավարտի հետ):

2008/2009 ուստարում ԵԿՏԱ-ում իրականացվելու են առաջին, մասամբ նաև երկրորդ փուլի գործառույթները:

3.1.ԸՆՏՐՈՎԻ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՆԵՐԱՌՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ

Ընտրովի կրթական մոդուլներն արտահայտվում են մասնագիտական ամբիոնի ներկայացրած ուսումնական պլաններում:

1. Յուրաքանչյուր ընտրովի կրթական մոդուլ մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում:
2. Որպես ընտրովի կրթական մոդուլ՝ մասնագիտական ամբիոնը ներկայացնում է մասնագիտական (4 կրեդիտ պարունակող) կամ մասնագիտացման (5 կրեդիտ պարունակող) դասընթացներ:
3. Մասնագիտական ամբիոնի ներկայացրած ընտրովի կրթական մոդուլների խումբը, որից ուսանողը պետք է ընտրի որոշակի մոդուլ կամ մոդուլներ, պետք է պարունակի նույն ժամաքանակով և նույնատիպ ժամային կառուցվածքով մոդուլներ:
4. Միասնական համակարգով, համապատասխան նորմատիվներով ընտրովի մոդուլներ կարող են ներդրվել բոլոր մասնագիտությունների ուսանողների համար նաև ընդհանուր հումանիտար, բնագիտական և մաթեմատիկական առարկաներից:
5. Ուսումնական պլանում ընտրովի մոդուլները, համապատասխան ժամային նորմատիվներով, ներկայացվում են համապատասխան կրթաբլոկներում (մասնագիտական, մասնագիտացման և այլն):
6. Ուսումնական պլանում ընդգրկված ցանկերով թվարկվում են այն մոդուլների (դասընթացների) անվանումները, որոնցից պետք է կատարվի ընտրությունը: Եթե տվյալ խմբում ամբիոնի կողմից նախատեսվել է մեկ ընտրովի կրթական մոդուլ, ապա պետք է առաջադրվի առնվազն երկու ընտրովի մոդուլի անվանում: Ամբիոնը կարող է նախատեսել առնվազն երկու և ավելի ընտրովի կրթական մոդուլ՝ ընդգրկված մասնագիտական և /կամ/ մասնագիտացման խմբերում: Երկու ընտրովի կրթական մոդուլի համար պետք է առաջարկել երեք և ավելի մոդուլ, որից կկատարվի երկու դասընթացի ընտրություն: Երեք ընտրովի կրթական մոդուլի համար պետք է առաջարկվի առնվազն չորս մոդուլ և այլն:
7. Ընտրովի մոդուլների ցանկերը ուսանողի ուսումնառության ընթացքում ենթակա են փոփոխությունների:
8. Ընտրովի դասընթացների քանակը սահմանվում և սահմանափակվում է համալսարանի նորմատիվային ակտերով և ուսումնական պլանին ներկայացվող

պահանջներով, այսինքն՝ պարտադիր դասընթացների հարաբերական ծավալով և ժամային նորմատիվներով:

3.2. ԸՆՏՐՈՎԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻՆ (ԳԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ) ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

1. Ընտրովի դասընթացներին գրանցվելու գործընթացը, մինչև համապատասխան կառույցների ստեղծումը, կազմակերպվում է կենտրոնացված ձևով՝ Ակադեմիայի ուսումնամեթոդական և վերահսկողության վարչության կողմից:
2. Մասնագիտական ամբիոնների կողմից Ակադեմիայի ուսումնամեթոդական և վերահսկողության վարչություն են ներկայացվում ընտրովի մոդուլների ծրագրերը, համառոտագրերը, ընտրության պայմանները /ներկայացված դասընթացներից քանիսը պետք է ընտրվի/ հաջորդ ուսումնական տարվա երկու կիսամյակների համար: Ընտրովի մոդուլների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դարձվում նաև ուսանողներին:
3. Անհրաժեշտության դեպքում մասնագիտական ամբիոնի ներկայացուցչի կողմից, ընտրությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, մոդուլների բովանդակությունը մանրամասնորեն ներկայացվում է ուսանողներին:
4. Ուսանողների գրանցումը կատարվում է 2-րդ կետում նշված տեղեկատվությունը ուսանողներին ներկայացնելուց հետո, երկու շաբաթվա ընթացքում:
5. Ուսանողների գրանցումը կատարվում է ըստ մասնագիտական խմբերի:
6. Յուրաքանչյուր ակադեմիական խումբ ընտրովի մոդուլներ ուսումնասիրելու նպատակով կարող է բաժանվել առավելագույնը երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրը կուսումնասիրի առանձին ընտրովի մոդուլ:
7. Տվյալ ընտրովի մոդուլը կկայանա, եթե գրանցվել է ոչ պակաս, քան 10 ուսանող, հակառակ դեպքում՝ տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին կառաջարկվի միանալ որևէ կայացած խմբի:
8. Մոդուլների ընտրության գործընթացի ավարտից հետո արդյունքները ներկայացվում են Ակադեմիայի ուսումնամեթոդական և վերահսկողության վարչություն՝ կատարելու համապատասխան ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկը:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուսանողի գիտելիքների գնահատման բազմագործոնային մոտեցումը կրեդիտային համակարգում խիստ կարևորվում է: Գնահատման այս համակարգի էությունն այն է, որ որոշակի առարկայի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում, գնահատման գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները, գիտելիքների ստուգման միջանկյալ և ամփոփիչ փուլերը, սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների ակտիվությունը (հավելված 7): Գործոնները գնահատվում են 100 միավորային համակարգով: Գնահատման ավանդական (հինգ նշանային) համակարգի հետ համեմատման համար որպես ուղեցույց կարող է ծառայել հավելված 6-ը:

Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որի ընթացքում, ուսանողական գործընթացին զուգահեռ, փուլերով կատարվում է գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման գործընթաց: Տարբերակված գնահատականներով⁵ գնահատվող առարկաների համար 20 շաբաթ տևողությամբ կիսամյակը տրոհվում է երկու փուլի՝ մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ (8 և 12 շաբաթ), իսկ ստուգարքով գնահատվող առարկաների համար՝ մեկ փուլով: Յուրաքանչյուր փուլի վերջին երկու շաբաթվա ընթացքում (միջանկյալ և ամփոփիչ քննաշրջաններ) իրականացվում են գիտելիքների ստուգում և բացակայությունների գրանցում: Ամեն փուլում ընձեռվում է բացակայությունների լրացման հնարավորություն: Կիսամյակի վերջում, նախքան ամփոփիչ քննության կամ ստուգարքի անցկացումը, կատարվում է ուսանողի անհատական (կամ արտալսարանային) աշխատանքի և գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների մասնակցության ակտիվության գնահատում: Ամփոփիչ քննաշրջանից հետո ձևավորվում է վերջնական հաշվարկային գնահատականը և համապատասխան ուսանողների համար կազմակերպվում է լուծարք:

4.1 ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐ

- Հաճախումները գնահատականի ձևավորման կարևոր պայման են:
- Հաճախումները հաշվառվում են դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ՝ դեկանատի կողմից տրամադրված մատյաններում:
- Հաճախումները չեն կարող հաշվառվել դասախոսի անհատական գրառումների հիման վրա:

⁵ Գնահատումները կարող են կատարվել ինչպես տարբերակված գնահատականներով (ավանդական մոտեցմամբ դա վերաբերում է քննությանը ավարտվող առարկաներին), այնպես էլ՝ «ստուգված/չստուգված» սկզբունքով (ստուգարքով ավարտվող առարկաներ):

- Կրեդիտային համակարգի պայմաններում հարգելի կամ անհարգելի պատճառներով բացակայությունները չեն տարբերակվում:
- Հաճախումների հաշվառման համար պատասխանատու է դասախոսը, նա է կատարում (կամ նրա հսկողությամբ՝ խմբի ավագը) համապատասխան գրանցումներ մատյանում:
- Բացակայությունների վերաբերյալ գրանցումները գնահատման ամփոփաթեթում նույնպես կատարվում է համապատասխան դասախոսի կողմից:
- Հաճախումների վերաբերյալ գրանցումները վերահսկում է ֆակուլտետի ղեկանը:
- Հաճախումները բազմագործոնային գնահատման համակարգի առանձին գործոն են՝ համապատասխան կշռով (տես հավելված 7):
- Հաճախումների գնահատականը 100 միավորային համակարգում իդենտիֆիկացվում է որպես հաճախումների տոկոս՝ ընդհանուր լսարանային ժամերի նկատմամբ:
- Հաճախումների ցուցանիշն անդրադառնում է նաև «ընթացիկ ակտիվության» կամ («ընթացիկ ակտիվության և արտալսարանային աշխատանքի» ոչ մասնագիտական դասընթացների համար) գնահատման վրա հետևյալ կերպ՝

Հաճախումների ցուցանիշը	Ընթացիկ ակտիվության (և արտալսարանային աշխատանքի) նվազագույն գնահատականը	Ընթացիկ ակտիվության (և արտալսարանային աշխատանքի) առավելագույն գնահատականը
100%	30	100
85-99%	20	100
80-84%	10	90
70-79%	0	80
60-69%	0	70
50-59%	0	60
40-49%	0	50
30-39%	0	40
20-29%	0	30
10-19%	0	20
0-9%	0	0

- Եթե ընթացիկ ակտիվության հաշվարկված գնահատականը փոքր է աղյուսակում նշված նվազագույն գնահատականից, ապա հիմք է ընդունվում աղյուսակում նշված նվազագույն սահմանը, իսկ եթե ընթացիկ ակտիվության հաշվարկված

գնահատականը մեծ է աղյուսակում նշված առավելագույն սահմանից, ապա հիմք է ընդունվում նշված առավելագույն սահմանը:

- Երկարաժամկետ հարգելի բացակայության դեպքում, դեկանի ներկայացմամբ, հաճախումների գնահատման վերաբերյալ ռեկտորատը կարող է կայացնել առանձնահատուկ որոշում:
- Ամփոփիչ քննաշրջանի ընթացքում հաճախումները չեն հաշվառվում⁶ :

4.1.1. ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՅՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

- Բացակայությունների լրացումը կազմակերպելու նպատակով ամբիոնները յուրաքանչյուր առարկայի համար հստակեցնում են լսարանային ժամեր թեմատիկան (օրացուցային պլան)՝ ներկայացնելով Ակադեմիայի ուսումնամեթոդական և վերահսկողության վարչություն:
- Բացթողնված լսարանային ժամերի համար, համապատասխան թեմաների շրջանակներում դասախոսը տալիս է որոշակի հանձնարարություն, որը պարտադիր պետք է կատարվի գրավոր: Հատուկ տետրի վրա փակցված տիտղոսաթերթին (հավելված 9) նշում են լրացվող բացակայության և հանձնարարության ամսաթվերը՝ կնքվելով դեկանատի կողմից:
- Հանձնարարությունը գնահատվում է «ՄՏՈՒԳՎԱԾ » կամ «ՉՄՏՈՒԳՎԱԾ»:
Դասախոսը տետրը ընդունելիս կատարում է բանավոր հարցում հանձնարարության վերաբերյալ՝ գիտելիքների բավարար մակարդակը ճշտելու նպատակով:
- Հանձնարարության ստուգման ժամկետն է մեկ շաբաթ՝ տրման պահից սկսած:
- Բացակայությունների լրացման տետրերը պահպանվում են ամբիոնում տվյալ խմբի գիտելիքների ստուգման տետրերի հետ միասին:
- Հիմք ընդունելով գրավորները՝ լրացված ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը դասախոսը գրանցում է ձևաթերթում (տե՛ս հավելված 1-ում 5,9,13 սյունակներ, հավելված 2-ում՝ 4,8 սյունակներ), որի հիման վրա էլ դեկանատում ճշտվում է չլրացված ժամերի թիվը և այդ մասին նշում է կատարվում նույն ձևաթերթի համապատասխան հատվածներում (տե՛ս հավելված 1-ում՝ 16 սյունակ, հավելված 2-ում՝ 11 սյունակ):

⁶ Ամփոփիչ քննաշրջանի ընթացքում հիմնականում իրականացվում են խորհրդատվություններ, գիտելիքների գրավոր ամփոփիչ ստուգումներ, հարցումներ ակտիվության և անհատական (արտալսարանային) հանձնարարությունների վերաբերյալ՝ ամփոփիչ քննաշրջանի ընթացքում գնահատումների նպատակով:

- Գեկանատն իրավասու է անհրաժեշտության դեպքում ամբիոնից պահանջելու բացակայությունների լրացման տեսրերը:
- ուսանողը մեկ շաբաթվա ընթացքում կարող է լրացնել տվյալ առարկայի շաբաթական լսարանային ժամաքանակից ոչ ավելի բացակայած ժամեր:
- Տվյալ փուլի ընթացքում չլրացված ժամերը չեն կարող լրացվել հերթական միջանկյալ քննաշրջանից հետո՝ հաջորդ փուլերի ընթացքում (բացառությամբ ռեկտորատում քննարկված հատուկ դեպքերի):

4.2. ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

- Գիտելիքների ստուգումները կատարվում են ըստ սահմանված ժամանակացույցի, կիսամյակի ընթացքում երկու անգամ՝ մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ (տարբերակված գնահատականներով գնահատվող առարկաների պարագայում) և մեկ անգամ՝ մեկ ամփոփիչ (ստուգարքով գնահատվող առարկաների պարագայում):
- Գիտելիքների ստուգումներն անց են կացվում միայն գրավոր:
- Ընդհանուր դասընթացների համար գիտելիքների ստուգումները (գրավոր աշխատանքները) կարող են կազմակերպվել կենտրոնացված, միացյալ հոսքերով:
- Գիտելիքների ստուգումներն անց են կացվում կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննաշրջանում: Չներկայացած ուսանողների համար կարող են կազմակերպվել լրացուցիչ ստուգումներ, եթե բացակայությունները հարգելի են: Այս դեպքում դեկանատի կողմից լրացուցիչ ստուգման անցկացումը համաձայնեցվում է ռեկտորատի հետ: Չներկայացած ուսանողների ստուգումներն անց են կացվում կենտրոնացված կարգով, լսարանային ժամերից դուրս:
- Նույն ուսանողի համար գիտելիքների գրավոր ստուգում չի կազմակերպվում երկրորդ անգամ:
- Գրավոր ստուգման արդյունքները գրանցվում են քննական ձևաթերթում (հավելված 1,2)՝ հերթական փուլի բացակայությունների և լրացված բացակայությունների հետ միասին (հավելված 1-ում՝ 6,10,14 սյունակներ, հավելված 2-ում՝ 5, 9, 13 սյունակներ):
- Ամփոփիչ ստուգումների ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:

- Ստուգմանն անհարգելի պատճառով չներկայացած ուսանողը ստանում է «D» կամ «U» գնահատական՝ 0 թվային արժեքով:

4.3. ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՄԵՆԱՐ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆԸՆԵՐԻՆ

- Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է 100 միավորային համակարգով դասախոսի կողմից կիսամյակի վերջում (մեկ անգամ)՝ հիմք ընդունելով կիսամյակի ընթացքում սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքների միջին արդյունքները:
- Գնահատման արդյունքները, կիսամյակի վերջում՝ ամփոփիչ քննաշրջանից առաջ, արձանագրվում են ամբիոնում, հատուկ ձևաթերթի վրա (հավելվածներ 3, 3ա), ապա դեկանատում՝ վերջնական ձևաթերթի վրա (հավելվածներ 4, 4ա, 5, 5ա):
- Կիսամյակի ընթացքում հատուկ մատյանում դասախոսը կատարում է ուսանողի ընթացիկ ակտիվության վերաբերյալ նշումներ, որոնց հիման վրա էլ հաշվարկվում է ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը:
- Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է տվյալ կիսամյակի ընթացքում առնվազն 3 գնահատման հիման վրա (ընթացիկ գնահատումներն իրականացվում են 100 միավորային համակարգով):
- Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես երեք և ավելի գնահատումների պարզ միջին թվաբանական:

4.4. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը հաշվառում և արժևորում է ուսանողի անհատական աշխատանքը (առաջադրանքը), որն էական գործոն է որոշակի մոդուլի վերաբերյալ վերջնական գնահատականը ձևավորելիս:

- Կիսամյակի ընթացքում ուսանողին անհատական աշխատանք է հանձնարարվում մասնագիտական⁷ դասընթացների (մոդուլների) համար: Մասնագիտական մոդուլների ցանկը հաստատվում է Ակադեմիայի ռեկտորատի կողմից:
- Անհատական աշխատանքի թեմատիկան և տրման ձևը հաստատվում են ամբիոնի կողմից:

⁷ Դասընթացները դասակարգվում են երկու խմբի՝ մասնագիտական և ոչ մասնագիտական: Մասնագիտական են թողարկվող ամբիոնների կողմից առաջարկվող այն դասընթացները, որոնք ընդգրկված են մասնագիտական կամ մասնագիտացման կրթաբլոկներում (4 կամ 5 կրեդիտ): Տվյալ մասնագիտության համար ուսումնական պլանում ընդգրկված մյուս դասընթացները համարվում են ոչ մասնագիտական:

- Անհատական աշխատանքի թեմատիկան ընդգրկում է տվյալ դասընթացի (մոդուլի) ծրագիրը:
- Կիսամյակի ընթացքում տվյալ դասընթացի (մոդուլի) համար ուսանողին հանձնարարվում է մեկ անհատական առաջադրանք:
- Անհատական առաջադրանքը հանձնարարվում է կիսամյակի առաջին ամսվա ընթացքում:
- Անհատական առաջադրանքների թեմաները չեն կարող կրկնվել նույն խմբի ուսանողների համար:
- Անհատական աշխատանքի իրականացման ժամկետը որոշում է դասախոսը (նվազագույնը՝ մեկ ամիս):
- Անհատական աշխատանքն իրականացվում է գրավոր:
- Անհատական աշխատանքի իրականացման ընթացքում դասախոսն ուսանողի հետ խորհրդատվական աշխատանք է կատարում լսարանից դուրս:
- Անհատական աշխատանքը կարող է տրվել հետևյալ ձևերով՝
 - ռեֆերատ
 - թեմատիկ գեկուցումներ
 - մշակումներ գիտական գրականությունից՝ ծանոթ և նոր թեմաների շուրջ
 - խնդիրներ
- Յուրաքանչյուր անհատական առաջադրանք գնահատվում է 100 միավորային սանդղակով:
- Եթե տվյալ դասընթացի շրջանակում նախատեսված է կուրսային աշխատանք կամ նախագիծ, ապա դա համարվում է անհատական աշխատանք, ուստի այլ անհատական առաջադրանք չի հանձնարարվում: Կուրսային աշխատանքի (նախագծի) գնահատականը (100 միավորային սանդղակով) նաև անհատական առաջադրանքի գնահատականն է:
- Տվյալ դասընթացի (մոդուլի) համար անհատական աշխատանքի գնահատականն արձանագրվում է կիսամյակի վերջում, մեկ անգամ, նախքան ամփոփիչ քննաշրջանի սկիզբը:
- Դասախոսը անհատական աշխատանքի վերջնական գնահատականը ամփոփիչ քննաշրջանի ընթացքում արձանագրում է հատուկ գնահատման ցուցակում, որը պահվում է ամբիոնում և վավերացվում է դասախոսի և ամբիոնի վարիչի ստորագրություններով: Այդ ցուցակում է գրանցվում նաև կիսամյակի ընթացքում ուսանողի ընթացիկ ակտիվության գնահատականը:

- Անհատական աշխատանքի գնահատականի մասին ուսանողը պարտադիր կարգով պետք է տեղեկացվի նախքան ամփոփիչ քննությունը կամ ստուգարքը:
- Անհատական աշխատանքների գնահատման ցուցակը հանձնվում է դեկանատ, որտեղ գնահատականները մուտքագրվում են ամփոփիչ ձևաթերթում՝ տվյալ դասընթացի (մոդուլի) վերջնական գնահատականը հաշվարկելու նպատակով:
- Անհատական աշխատանքները խստագույնս հաշվառվում են որպես փաստաթղթեր և պահպանվում ամբիոնում՝ տվյալ խմբի գրավոր աշխատանքների տետրերի հետ մեկտեղ:
- Անհատական աշխատանքը գնահատվում է երկու բաղկացուցչի հիման վրա՝
 - անհատական գրավոր առաջադրանք
 - անհատական աշխատանքի հրապարակային բանավոր ներկայացում կամ պաշտպանություն
- Անհատական գրավոր առաջադրանքը կարող է դրական գնահատվել հետևյալ անհրաժեշտ պայմանների դեպքում՝
 - աշխատանքն ունի ամբիոնի կողմից հաստատված պահանջվող կառուցվածքը և ծավալը առնվազն (20 տպագիր էջի սահմանում)
 - ուղղակի արտագրություն չէ սկզբնաղբյուրներից և այլ աշխատանքներից
 - գրված է հայերեն, բացի օտարերկրացի ուսանողների
 - օգտագործված են որոշակի աղբյուրներ, որոնք նշված են գրականության ցանկում:
- Վերը նշված կետի պայմանների առկայության, ինչպես նաև աշխատանքում առկա հիմնական դրույթների բանավոր ներկայացման դեպքում անհատական գրավոր առաջադրանքը պետք է գնահատվի առնվազն 50 միավոր: 50-ից բարձր գնահատականները ձևավորվում են հետևյալ գործոնների հիման վրա՝
 - վիճակագրական վերլուծություններ
 - ինքնուրույն տեսական վերլուծություններ
 - նյութի առավել գրագետ և հետաքրքրական բանավոր մատուցում
- Դասախոսը, ասիստենտի հետ միասին, գնահատում և ստորագրում է անհատական աշխատանքը՝ գրավոր (սեղմ) հիմնավորելով նշված գնահատականը:
- Դրական գնահատվելու համար անհրաժեշտ որևէ պայմանի բացակայության դեպքում աշխատանքը չի գնահատվում և վերադարձվում է լրամշակման: Լրամշակված տարբերակը պետք է ներկայացվի դասախոսին և գնահատվի նախքան ամփոփիչ քննությունը կամ ստուգարքը:

4.5. ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ոչ մասնագիտական դասընթացների համար կազմակերպվում է արտալսարանային աշխատանք, քանի որ ուսանողն այս դեպքում չի կատարում անհատական աշխատանք, իսկ գնահատման գործոններից մեկը կոչվում է «ընթացիկ ակտիվություն և արտալսարանային աշխատանք» (հավելված 7):
2. Արտալսարանային աշխատանքը կազմակերպվում է տվյալ դասընթացի վերաբերյալ հիմնական և լրացուցիչ գրականության գրավոր մշակումների միջոցով:
3. Ելնելով արտալսարանային առաջադրանքի ծավալից՝ այն կարող է հանձնարարվել ոչ միայն առանձին ուսանողի, այլ նաև ուսանողների խմբի:
4. Արտալսարանային առաջադրանքների շուրջ դասախոսների կողմից կազմակերպվում են անհատական և խմբային խորհրդատվություններ:
5. Ուսանողները հանձնարարությունը ներկայացնում են բանավոր, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ՝ ի լրումն սեմինար և գործնական պարապմունքների պատասխանների:
6. Արտալսարանային աշխատանքը գնահատվում է 100 միավորային համակարգով:
7. Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսանող պարտադիր պետք է ստանա արտալսարանային հանձնարարություն:
8. «Ընթացիկ ակտիվություն և արտալսարանային աշխատանք» գործոնի ամփոփիչ գնահատականը հաշվարկվում է կիսամյակի վերջում և ձևավորվում հետևյալ կերպ՝
 - հաշվարկվում է ընթացիկ ակտիվության ամփոփիչ միջին գնահատականը՝ համաձայն սույն ցուցանիշների 4.3 բաժնի՝ առանց հաշվի առնելու անհատական արտալսարանային առաջադրանքի գնահատականը,
 - «ընթացիկ ակտիվություն և արտալսարանային աշխատանք» գործոնի ամփոփիչ գնահատականը ընթացիկ ակտիվության ամփոփիչ գնահատականի և արտալսարանային առաջադրանքի գնահատականի միջին թվաբանականն է:

4.6. ԴԱՍԸՆԹԱՅԻ (ԿՐԹԱԿԱՆ ՍՈԴՈՒԼԻ) ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ամփոփիչ քննաշրջանից հետո (նախքան լուծարքները) յուրաքանչյուր ուսանողի համար դեկանատում հաշվարկվում է տվյալ դասընթացի վերջնական գնահատականը, գործոնների գնահատականների և կշիռների հիման վրա: Հաշվարկը կատարվում է կշռված միջինի սկզբունքով հետևյալ բանաձևով՝

$$H=M1 \times (N1/100)+M2 \times (N2/100+.....+ Mn \times (Nn/100)$$

որտեղ՝

H վերջնական հաշվարկային գնահատականն է

M1...Mn - 1-ից n-րդ գործոնների գնահատականներն են

N1...Nn - 1-ից n-րդ գործոնների կշիռներն են:

Հաշվարկային գնահատականը նույնացվում է գնահատականի տառային նիշով, ինչպես տարբերակված, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար, կիրառելով համապատասխան աղյուսակները (հավելված 6):

Տարբերակված գնահատականներով գնահատվող դասընթացների համար գնահատականի նիշերն են (A, A+, A-, B, B+, B-, C, C+,C-, D), իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների համար (S, U):

4.7. ԼՈՒԹԱՐՔ

- Լուծարքը կազմակերպվում է վերջնական հաշվարկային գնահատականի հիման վրա:
- Լուծարք է կազմակերպվում այն դեպքում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է « D»-ի՝ քննության պարագայում (կամ «U»-ի՝ ստուգարքի պարագայում), այսինքն՝ կլորացված թվային արժեքով փոքր է 40-ից (≤ 39) և մեծ կամ հավասար 10-ի⁸:
- Չի սահմանափակվում այն առարկաների քանակը, որոնցից ուսանողը կարող է մասնակցել լուծարքի:
- Լուծարքին չեն կարող մասնակցել այն ուսանողները, որոնց վերջնական հաշվարկված գնահատականը փոքր է տասից: Այս դեպքում համարվում է , որ

⁸ Հաշվարկված գնահատականը կլորացվում է ի օգուտ ուսանողի, այսինքն՝ 39,5 կլորացվում է 40 և 9,5 կլորացվում է 10:

ուսանողը չի կարող հաղթահարել դրական գնահատականի շեմը և ստանալ համապատասխան կրեդիտը:

- Լուծարքը դիտարկվում է որպես առանձին գիտելիքի ստուգման գործընթաց, որի գնահատականը նույնպես ձևավորվում է 100 միավորային համակարգով և գումարվում է հաշվարկված վերջնական գնահատականին՝ նախապես բազմապատկվելով 0,3 գործակցով (օրինակ 70 միավոր ստանալու դեպքում վերջնական հաշվարկված գնահատականին գումարվում է $70 \times 0,3 = 21$ միավոր):
- Տվյալ առարկայից լուծարքին մասնակցած ուսանողների համար գնահատականի առավելագույն սահման է հաստատվում 40 միավորը (C-): Եթե լուծարքից հետո , համաձայն 4-րդ կետի , վերջնական գնահատականը նույնիսկ 40-ից մեծ է ստացվում, ապա այն հավասարեցվում է 40-ի՝ հիմք հանդիսանալով նաև հետագայում ՄՈԳ-ը հաշվարկելու համար:
- Լուծարքին մասնակցող ուսանողը, դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան, լուծարք կարող է հանձնել 2-րդ անգամ, եթե լուծարքի դեպքում չի հաղթահարել դրական գնահատականի շեմը:
- Կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո , նախքան լուծարքը դեկանատը ձևավորում է լուծարքի թույլատրված ուսանողների ցանկը՝ այն հասանելի դարձնելով և ուսանողներին , և ամբիոններին: Այս դեպքում առաջին լուծարքի արդյունքը չի գումարվում հաշվարկված գնահատականին:

4.8. ԱՌԱՐԿԱՅԻ ԿՐԵԴԻՏԸ ՉՍՏԱՆԱԼՈՒ և ԱԿԱԴԵՄԻԱՅԻՑ ՀԵՌԱՅՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը՝

- Եթե տվյալ առարկայից կիսամյակի ընթացքում, ամփոփիչ քննաշրջանից հետո, վերջնական հաշվարկված գնահատականը փոքր է 10-ից:
- Լուծարքում չի հաղթահարել դրական գնահատականի շեմը (40%):

Կիսամյակի արդյունքներով ուսանողը Ակադեմիայից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկաներից կրեդիտ չի վաստակել:

5. ԴԵԿԱՆԱՏ-ԱՄԲԻՈՆ-ՈՒՍԱՆՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկանատը՝

- ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված՝ ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը (տե՛ս սույն ցուցումների 6-րդ բաժինը և հավելված 11), ինչպես նաև նյութերի ուղեցույց-փաթեթը հասանելի է դարձնում առաջին կուրսեցիներին,
- իրականացնում է ուսանողների հաճախումների ընթացիկ հաշվառման վերահսկողությունը,
- ստանում, կնքում և ամբիոններին է հանձնում գրավոր աշխատանքների տետրերը՝ իրականացնելով համապատասխան հաշվառում,
- ռեկտորատի հաստատմանն է ներկայացնում միջանկյալ և ամփոփիչ քննաշրջանների ժամանակացույցը,
- ռեկտորատին է ներկայացնում գրավոր աշխատանքներին հարգելի պատճառով չներկայացած, վերականգնված և այլ բուհերից տեղափոխված այն ուսանողների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց համար Ակադեմիայի ուսումնամեթոդական և վերահսկողության վարչության կողմից կազմակերպվում է գիտելիքների լրացուցիչ կենտրոնացված ստուգման և գնահատականների փոխանցման գործընթաց,
- գրավոր աշխատանքներին չներկայացած ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման լրացուցիչ ժամանակացույցի մասին,
- նախապատրաստում է գնահատման ձևաթերթերը (հավելվածներ 1,2)՝ նախապես լրացնելով 1-ին և 2-րդ սյունակները,
- վերահսկում է բացակայած ժամերի վերաբերյալ տեղեկատվության գրանցումները ձևաթերթերում,
- կնքում և ուսանողին է հանձնում բացակայությունների լրացման տետրերը՝ նախքան ամբիոնների կողմից հանձնարարություններ ստանալը (հավելվածներ 9),
- կիսամյակի վերջում, նախքան ամփոփիչ քննաշրջանը, ամբիոններից պահանջում է ուսանողների անհատական աշխատանքների և ակտիվության գնահատման ցուցակները (հավելվածներ 3)՝ քննաշրջանի արդյունքները ամփոփելու համար,
- ամփոփիչ ստուգումներից հետո նախապատրաստվում է վերջնական ցուցակը (հավելվածներ՝ 4,4ա,5,5ա), հաշվարկում է ամփոփիչ գնահատականը՝ լրացնելով ձևաթերթերի համապատասխան սյունակները՝ այդ տվյալները հասանելի դարձնելով ուսանողներին,
- նախքան լուծարքը՝ կազմում, հրապարակում և ռեկտորատ է ներկայացնում առանձին դասընթացներից (մոդուլներից) մինչև 10 արդյունքային միավոր ունեցող

(Ակադեմիայից հեռացվող) ուսանողների ցանկը, այդ մասին տեղեկացնելով վերջիններին,

- հրապարակում և ռեկտորատ է ներկայացնում այն ուսանողների ցանկը, ովքեր ստացել են «D» կամ «U» գնահատական և թույլատրվել են լուծարքների,
- հաստատված կանոնակարգով՝ կիսամյակի (լուծարքի) ընթացքում համապատասխան կրեդիտներ չվաստակած ուսանողներին ներկայացնում է հեռացման՝ նախապես հրապարակելով նրանց անուններն ու տեղեկացնելով նրանց այդ մասին:

Ամբիոնը՝

- կազմում և ուսանողին է ներկայացնում ուսումնառության անհատական ծրագիրը,
- կազմում է կրեդիտային հենքով ուսումնական պլաններ՝ համաձայն հաստատված նորմատիվների,
- յուրաքանչյուր մասնագիտական առարկայի համար նախապատրաստում է լսարանային ժամերի թեմատիկա՝ բացակայությունների լրացման մեխանիզմն ապահովելու նպատակով,
- յուրաքանչյուր դասավանդվող առարկայի համար նախապատրաստում է գրավոր անհատական և արտալսարանային աշխատանքների թեմատիկա,
- պատասխանատու է գնահատման ամփոփաթերթերի, ուսանողի անհատական աշխատանքների և ակտիվության գնահատման ցուցակի լրացման և դեկանատ ժամանակին ներկայացման համար,
- կազմակերպում է ընտրովի դասընթացների ներկայացումը ուսանողներին և ընտրությունը համապատասխան ժամկետներում,
- ուսումնական պլաններում պարբերաբար թարմացնում է ընտրովի դասընթացների ցանկը,
- նախապատրաստում է ձևաթերթերը (հավելված 3, 3ա), որտեղ կիսամյակի վերջում նշում է մասնագիտական մոդուլների համար ուսանողի ակտիվության և անհատական աշխատանքի գնահատականները, իսկ ոչ մասնագիտական մոդուլների համար՝ ընթացիկ ակտիվության և արտալսարանային աշխատանքի գնահատականները և այնուհետև հանձնում դեկանատ՝ հաշվարկելու ամփոփիչ գնահատականը,
- կազմակերպում է ուսանողների արտալսարանային աշխատանքը,
- ուսանողին տրամադրում է համապատասխան մեթոդական նյութեր, գրականության ցանկ՝ դասընթացը յուրացնելու համար,
- ուսանողին տալիս է գրավոր հանձնարարություններ՝ բացակայած լսարանային ժամերը լրացնելու նպատակով:

Ուսանողը՝

1. առաջին կուրսում, ուսումնառության սկզբում ծանոթանում է իրեն տրամադրված փաստաթղթերի փաթեթին և ստորագրում,
2. ծանոթանում է ամբիոնի կողմից ներկայացված ուսումնառության անհատական ծրագրին (**հավելված 11**),
3. իրավունք ունի ստանալու տեղեկատվություն վերջնական հաշվարկային գնահատականի, հաշվարկի մեթոդիկայի և գնահատման առանձին գործոնների վերաբերյալ,
4. իրավունք ունի ստանալու տեղեկատվություն լուծարքի թույլատրված ուսանողների վերաբերյալ,
5. իրավունք ունի համապատասխան ամբիոնից, գնահատականին ծանոթանալու նպատակով, պահանջելու քննության կամ ստուգարքի գրավոր տետրը,
6. ստուգմանը հարգելի պատճառով բացակայելիս, լրացուցիչ ստուգմանը մասնակցելու նպատակով դեկանատ է ներկայացնում բացակայության հետ կապված համապատասխան հիմնավորում:

5.1. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒՄԻ ԾՐԱԳԻՐԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մասնագիտական ամբիոնները կազմում են ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը (հատուկ ձևաթերթի միջոցով), որը ներառում է բակալավրիատի ութ կիսամյակների ընթացքում առաջադրված դասընթացները (հավելված 10): Յուրաքանչյուր առարկայի համար նշվում է համապատասխան կրեդիտը: Համաձայն նորմատիվային բազայի՝ յուրաքանչյուր կիսամյակի գումարային կրեդիտների քանակը պետք է լինի 30, ութ կիսամյակների ընթացքում՝ 240: Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը պետք է համապատասխանի ակադեմիական կրեդիտների բաշխման ներբուհական նորմատիվներին, որոնք հաստատվել են ԵԿՏԱ-ի գիտական խորհրդի կողմից: Անհատական ծրագրի մեջ արտահայտվում են ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացների ցանկը՝ ըստ կիսամյակների: Ընտրովի դասընթացների ցանկից ուսանողն ինքն է կատարում ընտրություն և գրանցվում համապատասխան դասընթացներին:

Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրն ամրագրված չէ և կարող է ուսումնառության ընթացքում հիմնավորված փոփոխությունների ենթարկվել:

5.2. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ուսանողի ակադեմիական առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացվում են նրա ակադեմիական տեղեկագրում (հավելված 8): Ակադեմիական տեղեկագիրը կարող է կազմվել ինչպես առանձին կիսամյակի կամ ուսումնական տարվա համար, այնպես էլ՝ լինել ամփոփիչ: Ակադեմիական տեղեկագիրը պարունակում է միջազգայնորեն ընդունված հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝ գումարային կրեդիտներ, գնահատված կրեդիտներ, վարկանիշային միավորներ և միջին որակական գնահատական (ՄՈԳ)⁹:

1. Գումարային կրեդիտներ

Գումարային կրեդիտը բոլոր դասընթացների և ուսումնական մոդուլների կրեդիտների գումարն է: Գումարային կրեդիտը ներառում է տվյալ կրթական ծրագրի համար նախատեսված բոլոր այն ուսումնական մոդուլները, որոնք գնահատված են A+-ից մինչև C- կամ S: Գումարային կրեդիտները հաշվելիս բացառվում են այն դասընթացները կամ մոդուլները, որոնցից ուսանողը գնահատվել է անբավարար (D կամ U):

2. Գնահատված կրեդիտներ

Գնահատված կրեդիտը (պարզ գումարով արտահայտված) տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտներն են, որոնք գնահատվում են տարբերակված գնահատականներով (գնահատվում են միայն A, A+, A-, B, B+, B- կամ C, C+, C-), այսինքն՝ այս ցուցանիշը պարունակում է գումարային կրեդիտների մի մասը:

3. Վարկանիշային միավորներ

Ակադեմիական տեղեկագրում տառային գնահատականները իդենտիֆիկացվում են համարժեք թվային միավորներով՝ գնահատականների աղյուսակի հիման վրա (հավելված 6): Որևէ դասընթացի (կամ կրթական մոդուլի) վարկանիշային միավորը որոշվում է տվյալ դասընթացի համար սահմանված կրեդիտների և ուսանողի ստացած գնահատականի արտադրյալով (օրինակ՝ եթե 4 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է B(77), ապա տվյալ դասընթացի ՎՄ-ը հավասար է 4 կրեդիտ X 77, այսինքն՝ 308 վարկանիշային միավոր՝ 400 հնարավորից): Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{վարկանիշային միավոր} = \sum_{i=1}^n (P_i \times Q_i),$$

որտեղ՝

Q_i-ն i ուսումնական մոդուլի գնահատականի թվային արժեքն է,

P_i-ն՝ i ուսումնական մոդուլի կրեդիտը,

գնահատման համակարգով վաստակած գնահատականները ձևափոխվում են կրեդիտային համակարգի պայմաններում գործող՝ բազմագործոնային գնահատման համապատասխան գնահատականների (տե՛ս ստորև աղյուսակը):

4 միավորային համակարգի գնահատականը	Կրեդիտային համակարգի գնահատականը	
	100 միավորային համակարգով	տառային նիշով
5 (գերազանց)	95	A
4 (լավ)	80	B
3 (բավարար)	65	C
ստուգված	80	S

Առարկայական տարբերություններ առաջանալու դեպքում կատարվում է ուսանողի գիտելիքների գրավոր կամ բանավոր ստուգում, որը գնահատվում է 100 միավորային համակարգով և փոխանցվում՝ համաձայն վերոնշյալ աղյուսակի:

Եթե ուսանողը վերականգնվում է բուհում միջանկյալ քննաշրջաններից հետո, ապա մինչև հաջորդ կիսամյակի սկիզբը նրա գնահատականը ձևավորվում է վերը նշված տարբերակով: Մյուս դեպքերում նա ընդհանուր կարգով մասնակցում է կազմակերպվող միջանկյալ քննաշրջանին (քննաշրջաններին), ամփոփիչ քննաշրջանին, նրան հանձնարարվում է անհատական աշխատանք, գնահատվում է նրա ընթացիկ ակտիվությունը, հաշվարկվում է հաճախումների տոկոսը (վերականգնման օրվանից): Ուսանողը չի վերահանձնում միայն անցած միջանկյալ քննաշրջանը: Այս դեպքում վերջնական գնահատականը հաշվարկվում է՝ հենվելով գնահատված բաղկացուցիչների միջին թվաբանականի վրա:

1. ՀՀ օրենքը «Կրթության մասին», Բարձրագույն կրթություն, պրակ 1, Երևան 2005թ.:
2. «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին», ՀՀ Կառավարության 2005թ., թիվ 2307-ն որոշումը:
3. ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», Բարձրագույն կրթություն, պրակ 1, Երևան 2005թ.:
4. **«Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման»** օրինակելի կարգը՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք հրամանով:
5. ECTS users guide, European credit transfer and accumulation system and the diploma supplement, Brussels 14 February 2005.
6. Recommendation from EUA and the national ECTS counselors regarding the role of ECTS in the elaboration of a European Qualifications Framework, 2004, Brussels.
7. ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները և ինտեգրումը բարձրագույն կրթության եվրոպական տարածք, Ծաղկաձոր, մարտի 11-12, 2005: